ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1245-Ա/2 «07» 07 2022 թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 187-Ն որոշման 17-րդ և 18-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ», Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգ», Երևանի «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան», Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Սպիտակի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին շնորհել հանրային գրադարանի կարգավիճակ՝ հինգ տարի ժամկետով և տրամադրել հավատարմագրման վկայական:

2. Սույն հրամանի կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի վրա:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

7/7/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211